

ՏԱՁԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏԵՐԹԷՆ-ԽՐԱՍԳԻՐ
ՋԱՐՄԱՅԻ ՔԱՂԱՆԱՅ ՎԷՋԻՐԵԱՆ

Բ. ՏԵՐԻ

ՇԱՐԱԹ, 26 ՓԵՏՐՎԱՐ 1911

ԹԻԻ 7

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մենք ՊՈՂՈՅ ԱՌԺԻԻ ԿՐՕՆ. Խորհրդածույթները. — Եր-

ջանիկ կեանքը

ԲԱԲԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Դէպի երկինք (Գերթուած)

ԼՈՒՍՆԹԱԳ

Հանգուցեալ Հայրապետի վարձանման քառուցի յիշատակին

ԹՈՐԳՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄՈՌՅՈՒՎԱՆ ԼՅՆԻ, — Եղիշէ (Գերթուած)

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ

Կեանքի ՆՊԱՏԱԿԻ, — (Բ.) Կեանքի առեղծուածները

ԼԷՈՆ ՏԸՆԻ

Հայկական մեծ համերգը

ՈՒՆԿԱԴԻՐ

Իրիկոյին (Պատկեր)


ՎԱՀԱՆ ԽԻՏԱՎԵՐՏԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ, — Շարժումն լուրեր եւ ժողովոյ որոշումներ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՆԹ»

9, ճամի Գարաուս, 9

ՂԱՆԱԹԻԱ





ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 26 ՓԵՏՐՎԱՐ 1911

ԹԻԻ 7

ՄԵԾ ՊԱՀՈՑ ԱՌԹԻԻ

ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

ՆՐՋԱՆԻՆ ԿՍԱՆԻՐԸ

Քրիստոնեայ մարդու համար կեանքը խորհրդածեալ կեանք մը պէտք է ըլլայ միշտ. որովհետեւ քրիստոնէութիւնը՝ կենցաղավարութեան զիտութիւն մը, կեանքը սուրբիլ գիտնալու վարդապետութիւն մըն է մանաւանդ, քան թէ, ինչպէս շատ անգամ ըսած եմ, աստուածաբանական վերացա-ցական դրութիւն մը: Չեմ գիտեր թէ քրիստոնեայ անունը կրողներ ի՞նչ չափով ըմբռնած են իրենց կրօնքէն ցայտող այս ճշմարտութիւնը, եւ հեռեւաբար ի՞նչ աստիճան խորհրդածեալ կեանք մը կ'ապրին ամէն օր բայց զիտեմ, որ ՄԵԾ ՊԱՀՔԸ, սկիզբէն ի վեր բոլոր քրիստոնեաներու համար քառասուն օրերու խորհրդաւոր չորջան մըն է եղած՝ սովորականէն աւելի ապրելու կրօնի կեանքը՝ քրիստոնէութիւնը, եւ խորհրդածելու իրենց սովորական կեանքի ընթացքին վրայ՝ ամփոփ յօդով եւ կրօնականացած էութեամբ մը:

Քրիստոնեաներու վրայ շեշտուած կենցաղավարական այս փոփոխութիւնը կ'արտայայտուի մանաւորապէս Եկեղեցինէրու մէջ, ուր, ի՞նչ ալ ըլլան ժամանակներն ու բարքերը, բարեպաշտութիւնն ու երկրւոյածութիւնը զգալի թափով մը կը պահանջեն իրենց գոհացումը. եւ իրաւ ալ ապաշխարութեան, այսինքն մարդը իր ներքին վիճակին զիտակից ընող սաղմոսներ ու աղօթքներ, շարականներ ու ընթերցումներ, ինչպէս նաեւ միեւնոյն նպատակին ձգտող քարոզներ՝ կ'օգնեն հաւատացեալներուն, այդ հոգեւոր գոհացումը գանեցու:

Քարոզչի մը համար անկարելի է չօգտուել այսպիսի գեղեցիկ առիթէ մը եւ չխօսիլ իր ունկնդիրներուն՝ կեանքի վրայ, երջանիկ կեանքի վրայ, որուն համակու համար բովանդակ մարդկութիւնը տարօրինակ գործունէութիւն մը ցոյց կուտայ, եւ Հայ Եկեղեցւոյ հարազատ ղաւակներն ալ զուրկ չեն այդ գործունէութենէն:

Կեանքի մասին խօսելու ատեն՝ ձեր ուշադրութիւնը պիտի հրաւիրեմ այնպիսի երևոյթներու վրայ, որոնք ոչ միայն ձեզի ծանօթ են արդէն՝ իբր գործնական կեանքի սովորական երևոյթները, այլ նաեւ

Աւետարանի մէջ անոնցմով բացատրուած է կեանքին ուղիղ ըմբռնումը:

Եւ Հայ Եկեղեցին՝ անշուշտ ոչ առանց պատճառի՝ մասնաւորապէս ծանրացած է Աւետարանի նշանաւոր էջերուն վրայ, ուր Անառակին, Տնտեսին, Դատաւորին եւն. կեանքերն ու գործերը կը նկարագրուին:

* Անցնինք ուրեմն մեր նիւթին. — Եւ ջանիկ կեանք:

Ի՞նչ է սակայն երջանկութիւնը եւ ո՛ւր կը գտնուի: Ահա՛ բուն խնդիրը: Բոլոր մարդոց գործունէութիւնը լարուած է երջանիկ ապրելու գաղափարով, ամէնքն ալ, դուք ալ, երջանիկ ըլլալ կ'ուզէք, միշտ կը յիշեցէք երջանկութիւնը, երաջներ ու անուրջներ ունիք ասոր մասին, բայց չեմ կարծեր որ մարդիկ ամէն կերպով ճշգրիտ գաղափար մը ունեցած ըլլան երջանկութեան վրայ:

Մարդիկ շատ տարտամ գաղափար ունին երջանկութեան վրայ, եւ այս վիճակին մէջ է որ կը հետապնդին ասոր եւ տեւէն, իր թէ նոյն ինքն անհատէն դուրս պայմաններու եւ պատճառներու մէջ պահուած ըլլար այդ: Մարդիկ ոչ միայն տարտամ գաղափար ունին երջանկութեան վրայ, այլ նաեւ տարբեր գաղափարներ, իրարու հակասական գաղափարներ:

Օրինակ մը շատ լաւ պիտի բացատրէ միտքս: Ես կը յիշեմ ճգնաւորի՞ մը թէ կեանքէ դժգոհ մարդու մը պատմութիւնը: Այս մարդը՝ փորձառու կեանքի դառնութիւններուն եւ տաժանքին՝ միշտ կը տըրտնջայ եւ կը մեղադրէ եզեր Ազամն ու Եւան:

Ազամ ու Եւան. երանելի՛ նախատուածներ, ինչո՞ւ համար Աստուծոյ պատուէրը չընենցիք եւ վռնաուեցաք Դրախտէն, զրկուեցէք երջանիկ կեանքի վայելքներէն եւ դատաւարտութեցաք ծանր աշխատութեան, եւ պատճառ եղաք որ մենք ալ, ձեր սերունդները, դատաւարտութիւնք դատելու եւ աշխատելու: Ի՞նչ կ'ըլլար, եթէ այդքան լսարիքներուն եւ վայելքներուն մէջ, այնքան առատութիւններուն եւ պարտաւորութիւններուն մէջ՝ այդ արգիլուած ծառին ստուղէն չուտէիք. կը մնանէիք

արդեօք: Ինչո՞ւ չկրցաք համբերել: Այս ի՞նչ է մարդուն վիճակը աշխատէ՛, քրտնէ՛, տառապէ՛, վերջ վախճան չունի:

Մարդուկը այնքան կը սրտնջայ եւ եւ այնքան իրաւացի կը կարծէ ինքզինքը Ս. Գրոց մէջ պատմուած Դրախտի կեանքի իրականութիւնը բաղձալու մէջ, որ յանկարծ տեսիլքէ մը կը յափշտակուի:

Տեսիլքի կեանքը անուշ է եւ երանաւէտ. մարդուկը հրճուանքի եւ փափկութեան մէջ այլ եւս չգտար կեանքի ցաւն ու վիշտը. ճիշդ եզերմի կեանքը, նախածնողներուն կորուստը կեանքը: Այս վիճակին մէջ մարդուկը վեր ի վար պատուելու առնէ՝ զաւիժարի մը ստորտը ուրիշ մարդու մը կը հանդպի աղի բեռներու քով. մարդը փոխանակ մէկիկ մէկիկ շաղկելու այս բեռները, կ'ուզէ ամէնքը միանգուայն շաղկել եւ ափսոսանքով վեր: Մեր մարդուկը երկար առնէ դիտելէ ետքը բեռնակիր մարդուն այս անխուհիւ եւ բացարձակապէս անկաքելի ընթացքը, կը ստիպուի խզել իր լուծութիւնը եւ մարդուն կ'ըսէ թէ՛ անխելք եւ դուն, այդ բեռներէն մէկը հաղիւ կրնաս տանիլ եւ կ'ուզես որ ամէնքը մէկէն շաղկես: Այս զիտողութիւնը հաղիւ բրտո՞ մեր մարդուկը կը սթափի իր տեսիլքէն, եւ ինքզինքը կը գտնէ իր առջի բնական եւ իրական կեանքին մէջ:

Ահա՛, Քրիստոսնայք, երջանիկ կեանքին ըմբռնումը մարդկութեան, եւ նոյն իսկ քրիստոսնայ մարդկութեան մէջ:

Այդ զբոյցը կեանքի իրականութիւններուն, ճշմարիտ եւ ստացւ. կեանքին ըմբռնելի մէկ պատկերն է, ուր կը տեսնէք թէ՛ մարդոց դժգոհութիւնները իրական կեանքի դէմ, եւ թէ՛ երջանիկ կեանքի մասին մարդոց իրարու հակառակ ունեցած հակասական, տարտամ գաղափարներն ու համոզումները:

Հարցուցէ՛ք կեանքէ՛ դժգոհներուն, թէ ի՞նչ կ'ուզեն գո՛հ եւ երջանիկ ըլլալու համար. հաղար ու մէկ իրարմէ՛ տարբեր, իրարու հակառակ եւ տարտամ պատասխաններ պիտի ընդունիք: Եւ առանց հեռունիւրը երթալու՝ ձենէ իւրաքանչիւրը

թող հարցընէ ինքնիրեն, թէ ի՞նչ կը խորհի երջանիկ կեանքի մասին, եւ ո՞ւր կը փնտռէ երջանկութիւնը: Գիտեմ թէ շատեր մեր մարդուկին պէս եղեմական կեանք մը կ'ուզեն վայելել: Աւելի շատեր այս կեանքի մէջ բախտաւոր համարուածներու բախտին եւ դիրքին մէջ կ'ուզեն տեսնել երջանկութիւնը: Մէկ խօսքով՝ որչա՛փ մարդ՝ այնչա՛փ կարծիք:

Բայց միթէ այս չէ՞ երջանկութիւնը, եղեմական կեանքը ինչո՞ւ փափաքելի չըլլայ. աշխարհի մեծ մեծ հարուստներուն վայելած դիրքութիւններն ու հաճոյքները կարելի՞ է տրհամարհել. արուեստներու եւ գիտութիւններու վարպետներուն եւ հերոսներուն տիեզերական համբաւները տխմարութիւն չէ՞ երջանկութիւն չհամարել: Ես կը կարծեմ, որ այս եւ աւանց նման անչափանքներ ու դատումներ պատրիշ. խաբող երեւոյթներ են: Ինչպէս որ ամէն փայլուն մասաղ սոկի չէ, նոյնպէս ամէն երեւոյթ՝ երջանկութիւն չէ:

Մարդիկ բացարձակապէս կը սխալին՝ երբ երջանկութիւնը չեն փնտռեր նոյն իսկ իրենց մէջ, իրենց ներքոյ: Բրիտոններու համար մանաւանդ՝ ներքի չէ այս դանդաղութիւնը: Կեանքի եւ կեանքի երջանկութեան մասին Աւետարանով քարոզուած յաւիտեանական ճշմարտութիւններ՝ քրիստոնեաները փիլիսոփաներ պէտք ըրած ըրած ըլլային մինչեւ հիմայ. բայց, աւա՛ղ, որ խորունկ մտրութիւններ՝ փակուած հաշուետմարի պէս մէկուի ըրած են Աւետարանը: Բրիտանեութիւնը կոյ, քրիստոնեայ չկայ, կամ շա՛տ քիչ կայ: Բրիտանեայ մարդն ալ իրմէ դուրս պայմաններու մէջ կը փնտռէ երջանիկ կեանքը: Հոգ չէ սակայն. պահ մը թողունք որ փնտռէ իր ուզած կերպով, եւ մենք ալ իրեն հետեւինք:

Դրախտի կեանքը երջանիկ էր. — Տառակոյս չկայ: Ամէն մարդ գիտէ այս բանը, քանի որ Ս. Գիրքը հրաշալի փափկութեամբ մը դժած է զայն: Բայց ես կ'ըսեմ. — Եթէ երջանիկ էր Դրախտի կեանքը, սակայն երջանիկ չէին Ադամ եւ Եւան: Անոնք ազատ չէին եւ չէին կրնար վայել

չել եղեմական բովանդակ եւ լիառատ երջանկութիւնը. այդ բոլոր վայելքներուն մէջ արգիլուած բան մը կար իրենց համար. ամէն բան պիտի վայելէին, եւ այդ մէկ բանը, գիտութեան ծառը, պիտի չվայելէին: Ինչպէս ըսած է մեր հին քարոզիչներէն մէկը, կոտարեւապէս երջանիկ չէին Ադամ եւ Եւա, քանի որ այդ մէկ բանը անհանգիստ կ'ընէր զիրենք: Եւ շատ ճիշդ է այս խորհրդածութիւնը: Մարդ երբ իր ուզածը չկրնար ձեռք բերել, վայելել, իր միւս բոլոր վայելածներուն համը չառնել: Իր արդէն ունեցածները՝ ուրիշներուն բաղձանքն ու նախանձը կը զրգուեն, այդ ուրիշները, որ կը կարծեն երջանիկ ըլլալ անոնցմով, բայց նոյն ինքն անոնց աչիւր երջանիկ չէ, եւ կը կարծէ որ միշտ բան մը կը պակսի իրեն:

Հարստութիւնը միակ եւ միակ պատճառը չէ՞ երջանկութեան. այս աշխարհի համար ամէն բան չէ՞ հարստութիւնը. — Անշուշտ այո՛ւ պիտի ըսենք ամէնքս ալ: Բայց չաճապարենք. պահ մը հարցուցէք անոնց որ հարուստ են, անոնց որ տաւոր անոր նախանձը շարժելու չափ հարուստ են, եւ շատեր կ'ըսեն. — Մ'ֆ, եթէ ես այդ հարուստներուն տեղն ըլլայի, իրապէս երջանիկ պիտի ըլլայի: Բայց հարցուցէք այդ հարուստներուն, հարցուցէք կ'ըսեմ անոնց, եւ աղաչեցէք, որ անկեղծօրէն ըսեն ձեզ՝ թէ իրաւի երջանիկ են, իրենց կեանքը ձեր կարծածին պէս երջանկութիւն մըն է անխառն եւ անարատ: — Հարկաւ գիտէք, որ երանութեւս պատասխան մը պիտի չընդունիք:

Կ'ըսուի թէ կան մարդիկ, որ մտաւորական աշխարհի հաճոյքներուն մէջ կը փնտռեն երջանկութիւնը: Գիտութիւն, արուեստ, իրենց բոլոր մտերմով ու մանրամասնութիւններով միթէ չեն ամէնէն անարատ միջոցները երջանկութեան: Կարելի չէ՞ ապօրէն, փաստակար բան մը մատնանիլ ընել այդպիսի ձգտումներու մէջ, որոնք պիտի երջանկացնեն իրենց ենթակաները: Իրաւ է սակայն, որ գիտութիւնները, արուեստները երջանիկ կ'ընեն մարդը: Եթէ տանք ալ, իրր արդիւնք

սխալ հասկերցողութեան, հարստութեան պէս նպատակ համարուն երջանկութեան, կարելի է ահաւոր յուսախաբութիւններու պատկերներ գծել մարդկային կեանքին վրայ, որովհետեւ հոգեկան խաղաղութիւնը տակնուվրայ ընող հազար ու մէկ դարձեալներ պատրաստ են սխալ եւ մուլար ճամբու մը վրայ, որ ելք չունի, եւ եթէ ունենայ, խիստ վտանգաւոր է այդ ելքը. հոն երջանկութիւն չէ՝ որ կը սպասէ մարդուն, այլ հակառակը, կեանքին արժէքը նուազեցնող պատճառներ:

Աւելի զարմանալի երեւոյթ մըն ալ կ'ուզեմ որ դիտէք կեանքի գէշ հասկերցում երջանկութեան վրայ, որպէս զի ըման ըլլայ հակասութիւնը՝ Նոյն իսկ պահ մը կնիթադերեցէք, որ գտաք երջանկները. բայց քիչ ետքը անոնք երջանկի չեն այլ եւս: Այն պայմանները, որոնց մէջ երջանկ կը զգային անոնք իրենք զիրենք, այլեւս դադարած են ատենք երջանկացուցիչ պայմաններ ըլլալէ: Նոր նոր միջոցներ կը փնտռեն, տարբեր բաներու կը տեսնան երջանկութեան համար:

Ասոնք անիմաստ երեւոյթներ չեն մարդկային կեանքի. լուրջ եւ շատ հանդիսաւոր երեւոյթներ են, որ անփոփոխելի, յաւիտենական ճամարտութիւններ կը քարոզեն. ասոնք՝ քրիստոնեայ մարդը, հերիք է որ լուրջ ըլլայ ա'ն եւ ողջամիտ, կը վերադարձնեն իր բնական վիճակին, ասոնք՝ այս պատրիշ եւ հրապուրիչ երեւոյթները՝ Աւետարանի մօտ կը բերեն մեզ, որպէս զի ուղղակի Քրիստոսի բերնէն լըսենք, թէ որոնք են երջանկները:

Եւ Քրիստոս իր առաջին քարոզութեան մէջ «Եւանի» կուտայ անոնց, որ հոգւով աղքատ են, սղաւոր են, հեղ են, արդարութեան քաղցն ու ծարաւը ունին, ողորմած են, սուրբ սիրտ ունին, խաղաղասիր են, եւլն., ինը նշանաւոր Երանինիքու ենթակաները, որոնց կեանքին մէջ հասարակ աչքով կարելի չէ բան մը տեսնել: Եւ սակայն՝ Քրիստոսի կեանքով յայտնուած այսպիսի կեանք մըն է որ կը սրահէ իր մէջ երջանկութեան բովանդակ դաղանիքը: Հոգւով աղքատներ երջանկի

են կ'ըսէ Փրկիչը: Եւ որոնք են արդեօք հոգւով աղքատ ըսուածները. — Օ՛, շատ մոկնութիւններ տրուած են այդ բացատրութեան, ամէնքն ալ խորհրդաւոր:

Եւ ես կը կարծեմ, որ Քրիստոս մատնանիչ կ'ընէ այն հոգիները, որոնք չեն տառապիր ընչաքաղցութեան հոգերով: Եւ այս է առաջին եւ էական հիմը երջանկութեան: Ընչաքաղցութիւնը, հակառակ իր անապառ աւարտներուն, երջանկի չընէր մարդը: Մարդ կրնայ աշխարհի չափ հարստութիւն չահլ, բայց ի՞նչ օգուտ, երբ հոգին է որ կը տուժէ: Հարստութիւնը նպասակը չէ երջանկութեան, ա՛յլ միջոցն է: Հոն, ուր այս երկու բմբունումները կը շփոթուին իրարու հետ, կը սկսի ապերջանկութիւնը: Հոգեկան անդորրութիւնը, որ մարմին կանոնաւոր եւ օրինաւոր անդորրութիւնէն կախուած է, կարելի չէ, մանաւանդ պէտք չէ զոհել նիւթին: Մարդ կոչուած է տիրել հարստութեան, հետեւաբար հարստութիւնը պէտք չէ որ սիրէ մարդուն վրայ: Հոգիով աղքատներ անոնք են, որ կը հասկնան կեանքի ճշմարիտ արժէքը:

Հոգիով աղքատ ըլլալէն կամ հոգեկան կատարելաւ անդորրութիւնէն կրնան բղխիլ միւս բոլոր երանութիւնները. վասն զի այն է հաստատուն հիմը փնտռուած երջանկութեան: Հեղութիւնը, սուրբ սիրտը, խաղաղասիր ոգին եւլն., եւ բարոյական այս մե՛ծ յատկութիւններուն գործնական դուստնանքը քրիստոնեայ մարդու կողմէն, այո՛, հաստատուած են հոգւով աղքատութեան վրայ:

Այն մարդը, որ կ'աշխատի իր բնախօսական եւ հոգեբանական ոյժերուն ամէնէն կանոնաւոր եւ ամէնէն հարապատ ձգտումներովը յաւաքանալ կեանքի ընթացքին մէջ, ուրիշ խօսքով՝ այն մարդը, որ հաւատարիմ է ինքնիրեն, իր ոյժերուն եւ կարողութիւններուն, կրնանք վստահօրէն ըսել, թէ այսպիսի մէկը երջանկի է, որովհետեւ ի՞նչ է մարդոց զգուհութեան կամ ապերջանկութեան պատճառները: Չէ՞ որ իրենց անչափ ու անսահման բաղձանքներն ու տեսնանքները: Յաճախ երազներ ու

անուրջներ են այս բաղձանքները, այս տեն-
չանքները, շատ վեր իրենց այժերէն եւ
կարողութիւններէն, բոլորովին օտար եւ
անհարազատ ձգտումներ, որոնք ո եւ է
հաստատուն հիմ չունին:

Աւելորդ չըլլայ գիտել տալ թէ տպեր-
ջանկութեան խնդիրը նոր բան մը չէ, եւ
նոյն իսկ երջանիկ կարծեաւածներ ալ,
սկիզբէն ի վեր, նոյն իսկ Ադամ եւ Եւա,
ինչպէս որ ըսինք առաջ, կատարեալապէս
դո՛ւ, այսինքն երջանիկ չեն կրցած ըլլալ
առ հասարակ: Եւ ինչպէս որ հիմայ, իբր
պահանջ հաշուական, անսկսադիտական
դարուն, հարսութիւնը, հարսութիւնը
եւ հարսութիւնը միայն կը դաւանուի իբր
առիթ եւ պատճառ երջանկութեան, հի-
սնին ալ ուրիշ միջոցներով կը կարծէին
հասնիլ երջանիկ կեանքի մը. անաշխատ
կեանքը, անտարբերութիւնը, հաճոյքն ու
հեշտութիւնը, որոնք շատ անգամ սխալ
հասկցուած իմաստաբախտ գրութիւն-
ներու արդիւնք էին, հիմ կը դրուէին Եր-
ջանկութեան:

Եւ փորձը ցոյց կուտայ թէ այդ մի-
ջոցները երջանիկ չեն ըներ կեանքը: Նոյն
իսկ կրօնքը— քրիստոնէութիւնը— դժբախտ
կ'ընէ մարդը, երբ սխալ հասկցուի: Քրիս-
տոնեայ մարդը իր մէջ, իր ներսը պէտք է
պիտոէ երջանկութեան սկիզբն ու հիմը,
իր ամէնէն հարազատ եւ կանոնաւոր ոյժե-
րուն եւ կարողութիւններուն գործունէ-
ութեան, զարդացման եւ արդիւնքին մէջ:

Այս կերպով միայն պիտի կրնանք Քրիս-
տոսի աւետած Երանելիներուն նշանակու-
թիւնը հասկնալ եւ համոզուիլ ասոնց իրա-
կանութեան: Երանի՛ հոգւով աղքատաց:
Ան չըսեր, հարուստ մի՛ ըլլար. ո՛չ, հա-
րուստ եղի՛ր, բայց ընչաքաղց մի՛ ըլլար,
ինչքաղ, հարստութիւնդ ալ գործածէ ոչ
միայն քու երջանկութեանդ համար, այլ
օգնէ ուրիշներուն ալ, որ երջանիկ ըլլան:

Աշխարհ սակայն պիտի հասկնայ այս
ճշմարտութիւնները: Չէ՛ որ շատոնց մէկդի
դրած է ան գործնական կեանքի մէջ
Աւետարանը: Տենդոտ գործունէութեան մը
մարտկին տակ՝ մարդիկ քուն իսկ չունին.
միջոցն ու նպատակը իրարու հետ չփո-

թած, մտանուած են անհանդարտութեան
մը, որ խռովիչ, սոսկայի բան մը ունի
զիտող աչքերու համար: Շահելու եւ վտա-
տրկելու պէտքը՝ ա՛լ դադրած է պէտք
ըլլալէ եւ փոխուած է հիւսնդութեան մը:
Պէտքը միայն պէտք է մնար իր պէտքի սահ-
մանին մէջ: Հոգիով աղքատութիւնը՝ հո-
գեկան արմարութիւն մը եղած է քրիս-
տոնեաներու մէջ, որոնք կը վաղէն ու կը
վաղվըն, իրենցմէ դուրս տեղեր գտնիլու
համար երջանկութիւնը: Անոնք մէկդի
դրած են ինքնաքննութիւնը, որով
մարդ կը ճանչնայ ինքզինքը, իր բուն ար-
ժէքը, եւ ըստ այնմ կը վարուի իր անձին
եւ ուրիշներու հետ: Մէկդի դրած են խոհե-
մութիւնը, որով բարձր կը պահուի աշ-
խատութեան նշանակութիւնը՝ սո՛ւրբ եւ
անարատ: Մէկդի դրած են հաւատքը, որ
մարդը չկապեր ստորին իրերու եւ հո-
գերու, այլ անոր կը հաղուեցնէ Քրիս-
տոսի կեանքը եւ կը մօտեցնէ Աստուծոյ:
Մէկդի դրած են վերջապէս անձնութեան
թիւնը, որով միայն քրիստոնեայ մարդը
պիտի կարենայ իրականացնելու աշխատիլ
այս աշխարհի մէջ բարօրութիւնն ու եր-
ջանկութիւնը:

Քրիստոնեայ մարդը, ուրեմն, պէտք է
որ լա՛ւ սերտէ ինքզինքը, որպէս զի իր
կարողութենէն, իր ոյժերէն վեր եւ աւել-
ւորդ բաղձանքներով անհանգիստ չըլլայ եւ
չսպաննէ իր մէջ իր երջանկութեան սկզ-
բունքները: Աշխարհի անծայր, եւ բոտ
երեւութին շատ հրապուրիչ մոլորութիւն-
ներու մէջ, սակայն, չչեղելու համար եր-
ջանկութեան ուղիղ եւ յայտնի ճամբէն,
քրիստոնեայ մարդը նոյն ատեն պէտք է
իր աչքին առջեւ ունենայ Քրիստոսի աւե-
տած երանութիւնները: Աւետարանը պէտք
է իր կեանքին օրինադիրքը, կրօնադիրքը
ընէ, մասնաւորապէս Աւետարանին այն
գլուխները, որոնք ծանօթ են Լեռան Բա-
րոզը անունով:

Հոս ալ դժբախտ իրողութիւն մը կայ
սակայն: Ո՞վ պիտի կարգայ Աւետարանը.
կեանքը կարճ է, գործեր եւ զբաղումներ
շատ. կարգալու համար այնքան նոր գիր-
քեր, եւ հրաշալի գիրքեր կան, որ մարդ

նոյն իսկ ատոնց չի համարիր. վէպերը մահաւանդ սոյնքան դրաւիչ են, որ կարելի չէ ատոնց թելը կորսնցնել:— Ստոյգ է. մեր մէջ ընթերցող դասակարգը, առ հասարակ լուրջ գիրքեր կ'ընտրէ կարգաւոր համար, նոյն իսկ վիպական գիրքերու մէջէն. կան նաեւ որ միայն վէպ կը կարդան, կան ալ որ կարդալ գիտեն եւ շատ քիչ բան կը կարդան կամ բնաւ չեն կարդար: Օհ, եւ ես չեմ վիճիր ճաշակներու վրայ. ասիկա իմ դործս չէ. բայց չեմ քաշուիր յայտարարելէ, որ մեր մէջ այսչափ կարգացողներ չեն ճանչնար Աւետարանը, գիրքերուն ամէնէն լուրջը եւ ամէնէն արեւելեանը: Կարելի էր նոյն իսկ պարզ հետաքրքրութեան համար կարդալ քրիստոնէութեան առաջին գիրքը, եւ քիչ մը ուշադրութեամբ կարդալ Լեւոն Բարոզը, եւ անոր մէջ պարզուած ու քարոզուած բարոյական եւ կրօնական սկզբունքները քննել: Եւ դժբախտութիւն մը չէ՞, Քրիստոսեւոյց, քրիստոնեայ մարդոց համար՝ չճանչնալ իրենց կրօնագիրքը: Մտածեցէք անդամ մը այս իրողութեան վրայ, որուն համար ես ըսի դժբախտ իղողութիւն մը: Պէտք է սակայն զոնք այսպիսի օրերու մէջ ձեռք առնել Աւետարանը, այո՛, ձեռք առնել եւ կարդալ, կարդալ՝ Լեւոն Բարոզը եւ քննել Քրիստոսի յայտնած ճշմարտութիւնները, խորը թափանցել այն երանութիւններուն, որոնք կ'աւետարանին (եւ կ'աւետարանուին) հոգեւոյ աղքատներուն:

* * Դրախտի կեանքով սկսանք մեր խորհրդածութիւնները. եթէ ուզէք ատուլ ալ վերջապէս: Աստուած Դրախտը այս աշխարհի, այս երկրագունդի վրայ պատրաստած է Ս. Դրոյց պատմութեան համեմատ: Ըստ իս շատ նշանակալից է որ Դրախտը երկրաւոր հաստատութիւն մը եղած է. այս կը նշանակէ որ մարդիկ երջանկութիւնը պէտք է փնտռեն այս աշխարհի վրայ, իրենց ներքը, իրենց ներքին կեանքին մէջ, եւ ոչ թէ դուրսը, հեռուները, երազներու եւ ցընորքներու աշխարհներու մէջ:

Հայ Եկեղեցւոյ ղաւակներ, օգտուեցէ՛ք ուրեմն Մեծ Պահոյ ընծաւած գեղեցիկ տօնի թէն, եւ անդամ մըն ալ աչքէ անցուցէք

ձեր կրօնագիրքը, անհեղու համար թէ երջանկութիւնը ո՛ւր կը սկսի եւ ո՛ւր կը վերջանայ:

Դուք, երազատեաններ, մոռցէք պահ մը ձեր երազային երջանկութիւնները, ամբողջեցէք եւ սերտեցէք կեանքի ստոյգ եւ իրական երջանկութիւններու ապահով միջոցները: Կեանքէն ձանձրապոյններ, դուք ալ պահ մը թօթափեցէք ձեր ձանձրոյթն ու դժգոհութիւնները, եկէք Աւետարանի լոյսին, աշխարհի խաւարին մէջ Քրիստոսի ձեռքով վառուած այդ մեծ, արեւելեան ճրագին քով, որպէս զի դոնէք երջանկութեան հրապուրիչ եւ զուարճալի ճամբան: Եկէ՛ք դուք ամէնքդ ալ, զանկող համար հոն ձեր հոգեկան կազդուրումը եւ երջանիկ կեանքը, ապրելու եւ փառաւորելու Ամենասուրբ Երրորդութիւնը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, Ամէն:

ԲԱԲԳԵՆ ԵՊԻՍԿՈՍ

ԴԵՊԻ ԵՐԿԻՆՔ

ՀԱՄԱՐԱԶԻ ԶԱՉՍ ԻՄ Ի ԼԵՐԻՆՍ՝ ՈՒՍԻ
ԵԿԵՍՅԷ ԻՆՉ ՕԴԵՌԹԻՐԵՆ:

ԴԱԼԻԻԴ

Երբ հոգեմառ վիճ ու բախի՞մ
Կը կործեն գիւնացքորէն,
Ու հառաչանք սրտիս խորէն
Դուրս կը ժայթի՞ն դառնակրօնի:
Աչեքդ, հոգի՛ս, երկինք վերցուր
Ուր կի բնակի Հայրդ երկնաւոր:

Աղբասութեան ժանց ճիւղներ
Երբո՞ր քանիսն արցունք աչեքդ,
Ու երբ անյայտ մահը եւեք
Կարծես կը բնայ քեզ քսիփոխել,
Աչեքդ, հոգի՛ս եւն:

Երբ քուք ու մուր, Գալստիքն քիւր
Թափեն զրիսուդ բիրտն անգուր,
Ու արիւնքն... խոցո՞ւ հոգուդ
Վերեքն երբեք մարդէր վաճ, քիւր,
Աչեքդ, հոգի՛ս, եւն:

Վերեն՝ լուսոյ Հօրմեղ՝ միայն
Մըկաբարանք, քսիփոխ կուգայ,
Ամային ետին Արեւնէ՛ք Գա,
Խաղաղաւէ՛ս, ջիւնջ ծիածան,
Ուսի, հոգի՛ս, աչեքդ վերցուր
Դեպի երկինք՝ քու անուշ Հօր:

ԼՈՒՍՆԹԱԳ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՎԱԽԱՆՄԱՆ

ՔԱՌՍՈՒՆՔԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Երբ ծնար ամենքն ուրախ եղան քու շուրջդ, մինչ դժուր կուլայիր. Նստա՛ այն-պէս սուրբիլ, որ մահուանդ օրն ամենքը լսն քու շուրջդ, ու դո՛ւն միայն ուրախ ըլլաւ, աչքերդ այս կեանքին հանդէպ առ յաւէտ փակած տտենդ»:

Միջնադարեան Հայ բանաստեղծի մը այս խօսքի՛րը միաքա՛ն կուգան, խորհելով համատարած այն թախծութեան վրայ, զոր ա՛յնքան կարճ ժամանակամիջոցի մը մէջ յառաջ բերաւ Հայոց Հայրապետին մահուան գոցքը, ու յիշելով նոյն ատեն՝ խղճմտանքի ներքին անդորրութենէ՛ մը միայն բղտող հոգեկան բերկրանքի այն խաղաղութիւնը, որ քաղցրութիւնն էր իր հայրական պատկառելի դէմքին, եւ որո՛վ անշուշտ փակեց նա իր աչքերը, իր պարտականութիւնը կատարելու քաջութիւնը ունեցող զինուորի մը գոհունակութեամբը:

Մարդիկ ընդհանրապէս ա՛յն ատեն կը զգան մեծութիւնն իրենց տառելութիւն-ներուն, երբ ա՛լ ձեռքէ հանած են զանոնք: Թէեւ ճշմարտութիւն մ'է՛ այս խօսքը, բայց իրաւացի պիտի չըլլա՛ր կրկնել զայն հիմակ, Իզմիրեանի նոր կնքուած գերեզմա-նին առջեւ. վառն դի մին էր նա այն սա-կաւաթիւ եկեղեցականներէն եւ թերեւս Հայերէն, որոնք, իրենց կեանքի եւ գործունէութեան բովանդակ ընթացքին մէջ, առկի՛ համարումի եւ համակրութեա՛ն ուրժանացած են, եւ որոնց անխառն ու մաքուր արժանիքը մահուան հալոցին պէտք չունի, իր իսկական ու ստոյգ աստիճա-նին վերածուելու համար:

Մեծ Հայ մըն էր նա, ամէն ոք գիտէր արդէն զայն, ու իր մահը հիմակ առկի կը շեշտէ միայն ամէնուս սրտին մէջ իր մեծութեանը զգացումը:

Կեանքիս մէջ երեք անգամ միայն տե-սած եմ զինքը, ու երեք անգամի՛ն ալ կրցած եմ առնուլ մէյմէկ փայլուն գիծեր,

իր վեհ ու պատուական նկարագիրէն, երեք խօսքերու միջոցաւ, որոնց մէջ կա-րելի է տեսնել արդարեւ իր մեծ հոգիին մաքուր բարեմասնութիւնները:

Տղայ էի տակաւին, հազիւ տասնամեայ, երբ իմ հայրենի գիւղիս մէջ, Պարոնգակ, տեսայ զինքը առաջին անգամ, քահանայա-կան ձեռնադրութեան մը առթիւ եկած: «Երբ լքէք ձեր ժողովուրդը, Աստուած ալ զձեզ լքէ», ուժիկն պատուէրը զոր աւանդեց նա իր ձեռնառններուն՝ քա-րողին պահուն, ա՛յնքան ահեղօրէն գոռաց իմ մէջս ալ, որ ծէսի ու հանգէսի բոլոր ձեւերն ու արարողութիւնները, որոնց համար դացած էինք թերեւս եկեղեցի՝ մանկական հետաքրքրութեամբ, ամէնքը ջնջուեցան երեւակայութենէս ու յիշողու-թենէս, բայց մնաց միայն այդ ձայնին չեշտը. ու, այն օրէն ի վեր ճանչցայ զին-քը միշտ իբրեւ Կոչումին մարդը:

Իբր երեք տարիներ առաջ, Պոլի՛ս էր որ տեսայ զինքը երկրորդ անգամ, Պատ-րիարքական ակնոթի վրայ, Կաթողիկոսա-կան լնարութեան համար էջմիածնէ դար-ձիս: Ա. քսորականի կեանքին սրտմաշուքը լիովին կը կարդացուէր դէմքին վրայ. բայց հզօր էր նայուածքը, ու շուտով հաս-կցայ նաեւ թէ զօրեղ էր իր մէջ ներքին մարդը, երբ իր հանդարտիկ խրատխօ-սութեանը միջոցին՝ կարծես երկնային կայծէ մը բռնկած՝ հառաչեց յանկարծ.

— Այս եկեղեցին ու Ազգը տասեւութ դարերէ ի վեր արիւն կը հոսեցնեն, ա-րիւն, արդարութեան եւ կրօնքի համար. պէտք չէ՛ արհամարհել անձնութեան այդ զգացումը...

Ու շուտով հասկցայ թէ արդարեւ Ազ-գի մարդն էր զերազանցապէս՝ Իզմիրեան Սրբազան,

Երրորդ ու վերջին անգամ տեսայ զին-քը էջմիածին, այս երկրորդ ուղեւորու-թեանս միջոցին, ու ճիշդ քսան օրուան ընտելութեանս ատեն ստացած տղաւորու-թիւններէս, որք այնքան խորունկ դրոշ-մուեցան իմ մէջս՝ իր բարի եւ պատկառելի շուքին ու շնորհքին ազդեցութեան տակ, ամէնէն առկի խորունկն ու զօրեղն եղաւ

այն վերջին խօսքը՝ զոր ուղղեց իր հագեւոր որդիներուն, երբ ըսաւ .

— Գտցէ՛ք, գործեցէ՛ք, մի՛ յուսահատիք, աշխատեցէ՛ք այս տառապեալ Ազգին համար . ձեր գործունէութեան ամէնէն տաժանելի վայրկեաններուն մէջ, եթէ կ'ուզէք չվհատիլ, գիտցէք ինքզինքնիդ յարաբերութեան մէջ դնել Յաւիտենականին հետ, մի՛ պակսեցնէք երբեք ձեր հաւատքը ճշմարտութեան եւ արդարութեան մշտակայութեան մասին :

Պէտք չունէինք ուրիշ խօսքերու, համոզուելու համար թէ Հայոց Հայրապետը, որչափ կոչումի եւ Ազգի, նոյնքան եւ աւելի եւս գուցէ՝ Հաւատքի մարդն էր առաւելապէս :

Կոչումին սէրը, Ազգին սէրը եւ Հաւատքին կրակը . այս երեք զօրութիւններն էին որ բաղադրած էին իր մէջ այն մեծ ու շքեղ նկարագիրը որ ամէնէն բարձր ու պատուական ոյժը եղաւ իր անձին :

Շատ անգամներ, խօսակցութեան պահուն, Իզմիրեանի նկատմամբ յայտնուած կարծիքներու կարգին, լսած եմ սա տեսակ դիտողութիւն մը . — «Արդարեւ, Իզմիրեան զիտնական մը չէ, զարգացեալ չէ, հետեւած չըլլալով բարձր դասնիթացքի մը, եւլն . » : Ընդունելով հանդերձ թէ ուսումնի ու զարգացումը բացարձակապէս անհրաժեշտ պայմաններ են մարդկային կատարելութեան համար, եւ պէտք կ'ըլլաւ անդրադառնալու յատկապէս սա կէտին վրայ թէ Իզմիրեան կաթողիկոս, առանց կանոնաւորապէս զարգացած միտք մը ըլլալու, բազմաթիւ զարգացեալներէ աւելի զօրաւոր ու կարող միտք մըն էր : Եւ ի՞նչու տարակուսիլ այս մասին . կեանքին մէջ ուսումնի ու կրթութիւնը միջոց են եւ ո՛չ երբեք նպատակ . արքայական այն պոպոտան են անոնք, որոնցմէ պէտք է անցնի մարդերու բազմութիւնն ու ամբողջութիւնը, հանելու համար կատարելութեան սահմաններուն, որ է նպատակը կեանքին . լայց այդ պոպոտայէն զատ՝ կան նաեւ երբեմն ցիւց ու սեպ ճամբաներ որոնք կրնան նոյն տեղը առաջնորդել մարդը ու հանձարն եւ տաղանդը, սէրը

եւ կամքը միայն կրնան ճանչնալ այդ կարճ ու դժուարին ճամբաները : Այդպիսիներէն էր Իզմիրեան, բնականէն՝ միտքով եւ կամքով զօրեղապէս օժտուած անձ մը, որ լրջութեամբ՝ փորձառութեամբ՝ քաջութեամբ եւ հաւատքով հասաւ արժանիքին, քիչերու միայն ստացած արժանիքի բարձրութեան :

Այն վայրկեանէն ի վեր, ուր տուջին անգամ կարդացի դոժկան հեռագիրը, երեւակայութիւնս զրաւուած է իր վեհ դէմքովը . չեմ կրնար մտքէս հեռացնել տեսարանը Էջմիածնի հայրապետանոցին, որուն Վեհարանի ծաղկեալ դահլիճին մէջ, իր մահուան դադաղին վրայ տարածուած էր իր գոյութեանը մարմնեղէն պատկերը, խունկի ու կնդրուկի անուշահոտութեանց մէջ, մէկ կողմէն Մատիսը, միւս կողմէն Արագածը, իրեւ յաւիտենականութեան մէջ կոթողուած հակադէմ աշտանակներ, որոնք իրենց ձիւնակատար բարձրութիւններուն վրայէն կը նշուէին «Յուրտ ճառագայթ»ները : Պէտք էր մնար հոն, արդարեւ, այդ դադաղը քանի մը օրեր, որպէս զի իրմով խոցուած սիրտերը բուժուէին նաեւ իրմով :

«Սիրտս խոցող ձեռքը միայն կրնայ սիրտիդ զաշն» :

Նոր ժամանակաց բանաստեղծի մը այս խօսքը կը ճշմարտուէր ա՛յդ դադաղին վրայ եւս : Անոնք որ խորապէս կը վշտակրին այդ մահով, այսինքն ամէն Հայ, պէտք է յիշէ այդ դադաղը, խորհելու համար թէ այն Ազգը որ ծնած է Իզմիրեաններ, հետեւ է մեռնելէ եւ ունի դեռ ընդ երկար ապրելու կորով ու կենսունակութիւն :

Նախորդ կաթողիկոս Խրիմեան Հայրիկի թաղման պահուն վէճ էր ծագեր զանազան դատարարներու միջեւ, թէ ո՛ւր պէտք էր պատրաստել իր գերեզմանը : Միեւնոյն դժուարութիւնը ծագեցաւ արդեօք տարբեր ձեւի տակ, միեւնոյն արժանիքը ներկայացնող իր յաջորդին թաղման պահուն : Արդարեւ դժուար է որոշել թէ ինչպէ՞ս եւ ո՛ւր կրնայ թաղուիլ մեծ մարդ մը, վաւեր զի չի թաղուիլ արժանիքը : Եթէ «չի

Թաղուիր ճառագայթ»ը, աւելի՛ եւս ուժ-
գնապէս կարելի է ըսել թէ չի թաղուիր
Արդարութիւնը, որուն կենդանի եւ հզօր
պատգամաբերներէն մին եղաւ մեր Ազգ.
կեանքին մէջ, ինքը՝ հանդուցեալ Կաթողի-
կոսը. ա՛յնպէս որ եթէ ի հո՛ղ իսկ դառ-
նայ իր մարմինն ու ոսկրակոյտը, պիտի
մնայ միշտ կենդանի՝ իր անունն ու յիշա-
տակը:

Պիտի չի թաղուի ուրեմն իր մէջ մշ-
տապէս ապրող ներքին մեծ մարդը, թէեւ
թաղուեցաւ իր մարմինը՝ քովիկը՝ Ներսէս
Աշտարակեցիին եւ Խրիմեան Հայրիկին հո-
ղակոյտերուն:

Առաջին դարերու քրիստոնեաները ի-
րենց նմանակներուն գերեզմանին մէջ կը
դնէին «արտասուաց սրուակ» մը, որուն
մէջ կ'ամփոփէին սիրելիներուն արցունք-
ները, նշանակել ուզելով այդ կերպով թէ
յաւիտեանապէս կ'ողջան զանոնք: Մենք
չկրցինք մեր արցունքները ամփոփել սըր-
ուակի մէջ, դնելու համար զայն Հայոց Հօ-
րը գերեզմանին ծոցը. բայց հոն, այդ գե-
րեզմանին մէջ պիտի մնայ ընդ միշտ մեր
անունով, Ազգին անունով, սափոր մը,
որուն մէջ պիտի մնան յաւէտ Հայուն ար-
ցունքները, Ազգին վշտին ու իղձերուն
բիւրեղացեալ չիթերը:

Իզմիրլեանի սիրան է այդ սափորը որ
պիտի չկտորի երբեք:

Իզմիրլեանի սիրտը արդարեւ ընդունա-
րան մը եղաւ Հայուն արցունքներուն,
վան զի իր անձը եղաւ մարմնացո՛ւմը նոյն
իսկ Հայ տառապանքին: Հայ ցեղը Արեւել-
քի պզտիկ ժողովուրդներուն մէջ միակն է
զրեթէ, որ չի գիտեր անասունի պէս մոռ-
նիլ, որ ճակատագրի կամ մարդոց ամէնէն
չնչին մէկ հարուածին դէմ ճիշ մը, բողոք
մը ունեցած է միշտ: Իր պատմութիւնը
գիտակցութեան եւ վշտի դարստոր աղա-
ղակն է՝ Աստուծոյ, մարդկութեան, քրիս-
տոնէութեան եւ քաղաքակրթութեան դէմ
ուղղուած: Ընդհանուր Հայութեան ծայրն
ու արտունջը խտացնող Ազգ. պատմու-
թեան մէջ Իզմիրլեանի անունը եւ յիշա-
տակը պիտի մնան, իբրեւ մին ամէնէն սըր-
տառուչ եւ հզօր շեշտերէն, որոնք ուղ-

ղակի Ազգին խղճէն եւ հոգիէն դուրս
կուգան:

Մեռաւ, բայց պիտի ապրի միշտ Իզ-
միրլեան Մատթէոս Կաթողիկոս:

Սաղազութիւն իր հոգիին, մեծարանք
զինքը ծնող ցեղին:

ՅՈՐԳՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

28 Յունվ. 1911

Սերասախա

ՄՈՌՑՈՒԱԾ ԷԶԵՐ

Նախորդ թիւով կը հրատարակէինք սրտայայտ
հատուած մը Եղեշէի դիւցազնական պատմու-
թեանէն: Եղեշէն, սակեղարու մասեհագրու-
թեան այդ գոհար մասեանը, անպայման եւ
ընդհանուր հիացում առաջ բերած է հին ու
նոր ժամանակներու Հայ—եւ նոյն էսկ օտար—
միտքերու վրայ, զորս վառած է կրօնքի եւ
ազգի ջերմ սիրովը: Ահա՛ թէ ինչ կը գրէ
Ռուսահայ մեծ բանաստեղծը,—

Ե Ղ Ի Շ Է

(ՀԵՂԻՆՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ)

Ոսկեծրդի, գեղեցկասիւս,
Ո՛վ իմ գրոյկ ոսկեունչ,
Ազգիս փառքը, անբաղդ օրը
Դու քարոզող անմրուոնչ:
Ո՛վ պիտի քար այն անբսպառ,
Սերն ու գուքը դեպ Հային,
Թե որ մարդիկ քեզ, ո՛վ գրոյկ,
Երբեմն չի կարգային:
Քեզ կարգալով՝ կը մոռանամ,
Եւ քերութիւնք մեր ազգին,
Դեպ Հայ եղբարս գուք ու սիրով,
Միտք կը լցուի իմ հոգին:
Մըսիս մեջը ես միտք կ'ասեմ,
«Սերունդք Վարդան մեր քաջին,
Անհրճար է՝ անփառունակ
Ըստուկ մընան կամ կորչին»:
Կամ տեսնելով հեզ հայ տէրք,
Սուրբ Պետրոսին կը յիշեմ,
Ու յուսահատ տեսնմ մըսեր
Ինձմէն հեռու կը քրեմ:
Եղիշէին Հայք կարգալով,
Նոր յոյսերով կը լրցուին,
Հայի գալոց բարիքն նոցա
Հոգւոց առջեւ կը բացուին:

Հա՛յ պատանի՛՜ շուտ շուտ կարդա՛
Այս գրքուկը ոսկեաւ,
Որ համոզուիս քե՛ մեր Հայը
Կորչելու ազգ չե՛ իսպառ:

ԿԱՄԱՐԱՌ ԿԱՌԻՊԱՅ

ԿԵԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Բ. (*)

ԿԵԱՆՔԻ ԱՌԵՂՇՈՒԱԾՆԵՐԸ

Ինչ որ կարեւոր է մարդուն ամենէն աւելի գիտնալ, սա է թէ ինք ի՞նչ է, ուրիշ՝ կուգայ, ո՛ւր կ'երթայ, ի՞նչ է իր ճակատագիրը:

Աւագ կարեւորութիւն ունին այն գաղափարները, զորս կը կազմենք տիեզերքի, իր օրէնքներուն եւ այն գերին մասին, զոր միզմէ իւրաքանչիւրը պարտի խաղալ այս ընդարձակ թատերաբեմին վրայ: Այդ գաղափարներուն համեմատ է որ կը վարենք մեր գործերը: Անոնց գիմնուլ է որ կը սահմանենք նպատակ մը եւ կը քալենք դէպ ի այդ նպատակը: Հո՛գ է իտարիսը, բո՛ւն շարժառիթը ամբողջ քաղաքակրթութեան:

Որչա՛փ արժէ իտալը, այնչափ կ'արժէ մարդը:

Համայնքներու, ինչպէս անհատին համար, աշխարհի եւ կեանքի իմացումն է որ կը գծէ պարտականութիւնները, կ'որոշէ հետեւելի ճամբան եւ որդեգրելի որոշումները:

Բայց, ինչպէս ըսինք, այն խնդիրները լուծելու դժուարութիւնը, վանսնք յաճախ մէկ կողմ ձգել տուած է:

Մեծամասնութեան կարծիքը վարսնոտ եւ տարտամ է, գործերն ու նկարագիրներն անոնց զրոշմը կը կրեն:

Հո՛գ է դարուն աղէտը, պատճառն այն խռովքին՝ որու նշաւակ եղած է:

Մարդ յառաջդիմութեան բնաւուն ունի, կ'ուզէ քալել, բայց ո՛ւր երթալու համար:

Ահա բան մը՝ որուն վրայ պէտք եղաւ

(*) Ա. յօդուածը տես ՏԱՃԱՐ ԹԻԼ 5:

ծին չափ չի խորհուր: Իր ճակատագրին անգիտակ մարդը, կը նմանի ճամբորդի մը, առանց ճանչնալու ո՛չ անոր մեկնակէտը, ո՛չ ժամանակիք տեղը, առանց գիտնալու թէ ինչ ո՛ւր կը ճամբորդէ, եւ ո՛ւր հետեւադար միշտ արամադիր է կենալու պզտիկ արդիւքի մ'առջեւ, ու ժամովա՛ ճառ կ'ըլլայ ի գուր:

Կարգ մը վարդապետութիւններու անբաւականութիւնն ու մթութիւնը, զեղծումները՝ որ անոնցմէ ծնած են, շատ մը միտքեր նիւթապաշտութեան մէջ ձգած են: Մարդիկ յօժարակամ կ'ընդունին թէ ամէն ինչ կը լիննայ մահալ, թէ մարդ ուրիշ ճակատագիր չունի, եթէ ոչ անհետիւ ոչնչութեան մէջ:

Աւելի հեռուն պիտի ապացուցանենք թէ այս կարծիքը բացէ ի բաց որքան հակառակ է փորձառութեան եւ բանականութեան: Ըսե՛նք հիմալուրնէ թէ ան կը ջնջէ արդարութեան եւ յառաջդիմութեան ամէն գաղափար:

Եթէ կեանքը սահմանափակուած է օրօրոցէն գերեզման, եթէ անահաւութեան հեռապատկերները չեն գտր լուսաւորել մեր էութիւնը, մարդս իր բնաւուններուն, ցանկութիւններուն եւ վայելքներուն օրէնքէն ուրիշ օրէնք ունեցած չըլլար: Եթէ սիրէ իսկ բարիքն ու արդարութիւնը, ոչ մէկ կարեւորութիւն ունի:

Եթէ մարդ կոչուած է երեւալու եւ աներեւութանալու այս աշխարհի մէջ, եթէ իր հետ մտապաշտեան մէջ պիտի աանի իր յոյսերն ու փափաքները, անիկա այնքան աւելի պիտի ստաւալի, որքան աւելի մաքուր եւ բարձր ըլլան իր տենչանքները: Ճշմարտութեան սիրահար, իրաւունքի գինուոր իսկ եղած ըլլայ, կրկին ինքզինք դատապարտուած պիտի զգայ երբեք չսեռնելու անոնց իրականացումը: Յառաջդիմութեան սիրահար, իր նմաններուն ցաւերուն հանդէպ զգայուն ալ ըլլայ, պիտի երեւակայէ որ պիտի չիջանի իր սկզբունքներուն յաղթանակը անհանդէ առաջ:

Անէութեան հեռապատկերով որչա՛փ անձնութիւններու գործէք, այնչա՛փ լի պիտի ըլլայ ձեր կեանքը զառնութեամբ եւ

պատրաստեցով : Ըսել աւելորդ է թէ այն ա-
տեն ետապիրութիւնը վսեմ իմաստութիւնը
պիտի ըլլար, կեանքը պիտի կորսնցնէր
ամէն մեծութիւն, ամէն արժանիք : Մարդ-
կային մեքի ամէնէն աղնիւ կարողութիւն-
ները, ամէնէն վեհ ձգտումները վերջապէս
պիտի խամրէին, պիտի չիջանէին ամբող-
ջովին :

Ապագայ կեանքի ժխտումը կը ջնջէ
նաեւ ամէն բարոյական նուիրականութիւն :
Այդ տեսակ մարդիկ լաւ ըլլան թէ յոռի,
ոճրագործ թէ վսեմ, ամէն դործ միեւնոյն
արդիւնքի պիտի յանգէր : Ա՛լ չկայ փո-
խարկնութիւն թշուառ էակներու, խաւա-
րի, հարստահարութեան, վշտի . ա՛լ չկայ
սիրտանք՝ փորձութեան մէջ, չկայ յոյս
վշտագնակներու :

Ապագային, ո՛չ մէկ տարբերութիւն
չսպասեր՝ միո՛յն իրեն համար եւ յոճախ
ի վիսա իր նմաններուն ապրող ետակրին
եւ մարտիրոսին կամ առաքեալին միջեւ, որ
տառապած, ընկճուած է կռուելով մարդկա-
յին ազգի ազատագրման եւ յոռոճ դիմու-
թեան համար :

Միեւնոյն ջուրով պիտի լուացուին տ-
նոնք : Բանի որ ամէն ինչ պիտի լինայ
մահով, էակը չունի ուրեմն ո՛չ մէկ սրտ-
ճառ՝ զսպելու ինքզինք, սանձելու իր բը-
նագոյններն ու ճաշակները : Երկրային օրէնք-
ներէ դուրս, ոչինչ չէ կարող զայն սան-
ձել : Նոյնպէս՝ բարին ու չարը՝ արդարն
ու մեղաւորը պիտի չփոթուին եւ պիտի
խառնուին սչնչութեան մէջ : Անճնասպա-
նութիւնն ալ միշտ պիտի ըլլայ միջոց մը՝
խոյս տալու մարդկային օրէնքներու խա-
տու թիւններէն :

Անէութեան հաւատքը, ջնջելով ամէն
բարոյական նուիրականութիւն, անյուշակի կը
թողու միանգամայն էակներու տնհաւա-
սարութեան խնդիրը, բան մը՝ որու կը վե-
րաբերի կարողութիւններու, ընդունա-
կութիւններու, վիճակներու, արժանիք-
ներու զանազանութիւնը :

Իրապէս, ինչո՞ւ ոմանո՞յ՝ մտքի եւ սր-
տի ամէն ձիրքեր, բախտի շնորհներ, մինչ
անգին ուրիշներու բաժին ինկած են մի-
ա՛յն իմացական աղքատութիւն, մոլու-

թիւններ եւ թշուառութիւն :

Ինչո՞ւ միեւնոյն ընտանիքի մէջ, ծնող-
ներ, եղբայրներ, նո՛յն արիւնէն, նո՛յն
միտէն սերած, իսկապէս կը տարբերին այն-
քա՛ն կէտերու վրայ : Ահա անյուշակի խն-
դիրներ՝ որքա՛ն նիւթապաշտներու, այն-
քա՛ն ալ ինքզինքնին հաւատացեալ նկատող
չաա մը անձերու համար :

Հակիրճօրէն պիտի քննենք սոյն իւրն-
դիրները :

ԼԷՕՆ ՏԸՆԻ

Թարգմ. Ա. ՇՈՒՍԱՐԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ՄԵՐ ՀԱՄԵՐԳԸ

Հոգեկան մաքուր, երանաւէտ վայելքի
երեք ժամոր անցուց անցեալ կիրակի օր
Իւնիօն ձրանաէզի սրահը խռնուած երկսեռ
հոծ բազմութիւնը : Մեծ արուեստագէտը՝
Տ. Կոմիտաս վ.՝ անկարելին յաջողած էր
ձեռք բերել, շաա կարճ ժամանակի մէջ
մարդելով ամենամեծ մասամբ ձայնագրու-
թեան արուեստէն անսեղեակ երգչախումբ
մը՝ իբր 200 հոգիէ բաղկացեալ՝ որու մէջ
կարեւորագոյն թիւ մը կը կազմէին դպրո-
ցական աղջնակներ : Հոն մենք վերահասու
եղանք թէ հաստատուն կամքն ու դուր-
ձելու եռանդը՝ միացած անվիճակի Կարողու-
թեան մը եւ արժանիքի մը՝ ի՛նչ հրաշքներ
կրնան գործել :

Համարդը՝ երկու մասերէ բաղկացած՝
— եկեղեցական եւ զեղջուկ երգեր — հաւա-
սար բարձրութեան մը վրայ էր արուեստի
նրբութեան տեսակէտով, եւ զմայլելի ազ-
դեցութիւն մ՝ ըրաւ ունկնդիրներուն վրայ :
Երբեք Սուրբ, Սուրբ մը ագիէ աւելի հզօր
եւ ցնցող տաղաորութիւն չէր գործած Հայ
ժողովուրդին վրայ : Երբեք Տե՛ր, ողոր-
մեա՛ն, և Արի՛, Աստուած հարցն վերոցը
չէին ունեցած ժողովուրդին սրտէն պոռթ-
կայող պաղատանքի այն սրտառու շեշտը
որ ցնցեց զմեզ, երբ Պ. Սէմէրճեան կը
գոչէր սիրա բզկատող արտմութեամբ մը .

Լե՛ր օգնական ազգիս Հայոց :
Նոյն քաղցր տխրութիւնը՝ Ունալուայի

յուզիչ երգերուն, մասնաւորապէս Սիրս իմ սասանիին մէջ, որ ստուգիւ սարսուցող մեր սիրտերը: Քառասնայն երկսեռ խումբի հիւանդի Հայր Մեհով փակուեցաւ համերգին Ա. մասը, որ աւելի՝ խորունկ աղապատանք մը, անհուն սէր մը ծնցող ամէնէն սկիզբիկին սրտին մէջ դէպ իր Ս. Եկեղեցին եւ անոր հրաշալի երաժշտութիւնը, որ ընդունակ է եւրոպական ամենաբարձր արուեստի ամէնէն ներշնչող ու սրտազգեցիկ նրբութիւններն ընդունելու, առանց խորապէս փոխելու իր հիմը:

Երկրորդ մասը նոյնքան մօտիկ էր մեր սրտին ու հոգիին, ըլլալով ցողացումը ճշմարիտ Հայ կեանքին: Գեղջուկն էր որ իր տխուր կամ զուարթ երգերով կը ցուցադրէր մեզի իր հոգին, իր զգացումներուն ամէնէն թաքուն ծալքերը: Հոն շինականն իր խկութեանը մէջ, իր կեանքի լրութեանը մէջ էր: Երկրորդին իր կալերգով, սայլ-երգով, գութաներգով կը պատկերանար աշքերու առջեւ՝ դաշտի աշխատութիւններուն առած ինքզինքը, նոյնացած հողագործի կեանքին հետ, ուր իր սիրտը կը բաբախէ լծվար կենդանիին սիրովը, որուն համար ամէնէն գգուող, փառաքուշ շնչաբունի: Շինականի հովուերգական անուշ խմբերգներուն մէջ, որոնք բուն ծախերու մէջ կրկնուեցան, կը տեսնես գեղջկան կեանքը՝ մաքուր վայելքներու անձնատուր: Սրտի սեղմումով մը նշմարել կը կարծես պանդուխտը հայրենակարօտ, որ Կռուկէն «խապրիկ» մը կը խնդրէ իր աշխարհէն, կամ անտուն անտէր մնացող թշուառին անպատում վիշտը, զոր նա կուլայ անմխիթար արտաբերմամբ մը:

Հակիրճ տողերու մէջ «ամաթէօր»ի մը կողմէ գրի առնուած այս նոթերը չեն կըրնար հեռաւոր գաղափար մ'իսկ առաւ Կոմիտաս Վ.ի ձեռք բերած զմայելի արգիւնքին վրայ: Տպաւորութիւնը զոր կրեցին ունկնդիրները, եղաւ խորունկ հիացում մը անոր արուեստի բարձրութեան եւ հրաշալի կերպով մարզուած ձայնին վրայ, որով՝ մասնաւորապէս մեներգներուն մէջ՝ զգացող մեզի թէ ո՛ր աստիճան խորունկ, բնատուրանիկ շնչո մը կարելի է պահել Հայոց

երաժշտութեան մէջ, արուեստի ամենուրեք ին նրբութիւններուն եւ պահանջներուն գոհացում առլով հանգերձ:

Մենք սիրեցինք զինքը՝ իր արուեստին ու եռանդին համար հաւասարապէս, սիրեցինք զինքը՝ օտարին առջեւ այնքան բարձրացնելուն համար Հայ գեղարուեստը, սիրեցինք զինքը՝ մանաւանդ անոր համար որ իր հրաշալի արուեստով կը յաջողի համակրութեան տաք հոսանք մը առաջ բերել ամէնէն նրբաճաշակ, ամէնէն դժուարահոգ Հայ բարձր գոտակարգին մէջ՝ դէպի գաւառն եւ իր երաժշտութիւնը, ցարդ այնքան անտեսուած եւ արհամարհուած մեր մէջ:

Թողլով ուրիշ օգուտները, եթէ Կոմիտաս Վ. իր համբարներով—զօրս կրկնուած ու բազմապատկուած տեսնել ամէնուն իղձն է— կարողանայ վտարել մեր ընտանեկան յարկերէն արեւելեան մեղկ երաժշտութիւնը, եւ զարգացնել եւ ընդհանրացնել ճշմարիտ երաժշտութեան նուրբ ճաշակը, առով իսկ մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլայ ազգին:

Պէ՛տք է մտքովն առաւ հայկական երաժշտանոցի գաղափարին որ օգլն մէջ շրջան կ'ընէ. առա՛նց տակաւին իրականացած ըլլալու:

Պէ՛տք է Պալիս պահել Տ. Կոմիտաս Վարդապետը:

Ընդհանուրին բաղձանքն է այս:

ՌԻՆԵՆԳԻՐ

Ի Ր Ի Կ Ն Ա Յ Ի Ն

(Պ Ա Տ Ա Ն Ր)

... Նորէն իրիկուան ձայները բերեղ

վերջալուսային խնծիղով օծուն

Կ'անցնին յամբերերս

Նորէն հօտաղին տրտում կանչն աղու

Փախչող թովանքին լոյծ թեւերուն մէջ

Իր վանկն է բանտերս

Հորիզոնին վրայ, հեռուն, այս գիշեր

Կրկին կ'ամպոսի արեւն տրեւուն.

ձաճանչը վերջին

Շամանդազին մէջ կ'իյնայ յուսահատ
ջուրէն ծնանող բիւր երանգներու
Բաղձունքը սրտին:

Լոյսերու արծաթ անձրեւումին տակ
Դաշտերու ծոցին՝ գոմշուկին երգն է
Անո՛ւշ, մեղանո՛ւշ:

Իրիկնավերջի շառաւյլը բոսոր
Այնտե՛ղ էր սրտին դաղտնիքն է բացեր
Սիրով տրտմանուշ:

Սիրազեղ կեանքի ի՛նչ հոգեղութիւն
Ծուէններ երկա՛ր, յուշիկ հուպ տուող
Զեփուռին մէջէն:

Ու ի՛նչ դուռնահունչ զանգեր իտուլ, մեղայ
Մաքուր ու անբեծ մանուկ հոգիիս
Յուներ կը յուշեն...:

Սկիւտար

ՎԱՀԱՆ ԽԻԻՏԱՎԵՐՏԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԱՌԿԱԽ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ազգային վարչութեան ժողովներն եւ
Խորհուրդները կը շարունակեն գումարում-
ներ ընել եւ խորհրդակցութիւններ կատա-
րել ընթացիկ գործերու վրայ, որոնց դու-
հացում տալու կ'աշխատուի կարելիութեան
սահմանին մէջ: Պաւստներէ եղած խնդ-
րանքներու պատասխանները կը արուին
անյատաղ, եւ Տեղապահ Ս. Բ. մեծ գոր-
ծունէութիւն կը ցուցնէ, ամիսներէ ի վեր
զիջուած թղթածրարներու կանոնաւորման
եւ բարդուած խնդրոց լուծման համար:
Բայց հանրային թէ մասնաւոր բազմազան
խնդիրներուն մէջ ամէնէն կենսականներն
են հողային, ազգային սեփականութեանց,
կրթական եւ գիտութեան հարցերը:
Հողային խնդրոյն վրայ վերջնական ելքու-
կացութեան մը յանգելու համար, Ազգ.
Վարչութիւնը՝ Օսմ. Երեսփոխաններու հետ
խորհրդակցութենէ մը ետքը՝ պէտք տեսաւ.
Պետական Խորհրդոյ մէջ պատրաստուած և
Օսմ. Խորհրդարանին մատուցանելի օրի-
նադրին վրայ գաղափար մը կազմելու:
Նոյնպէս Ազգ. սեփականութեանց խնդրոյն
վրայ եւս խորհրդակցութիւններ կատա-

րուած են ի նկատ աւանելով մասնաւորա-
պէս Ղալաթիոյ Խառթէխանէ խանի խնդի-
րը, որու մասին Բաղաք. Ժողովէն, Ազգ.
Երեսփոխաններէ եւ փաստաբաններէ խառն
պատուիրակութիւն մը պիտի ներկայանայ
Վարչապետին եւ Դատական նախարարին,
բացառելու համար թէ ի՛նչ սխալ եւ ա-
նարդար միջոցներու կը դիմուի, ազգին
իրաւունքը ձեռքէն խլելու համար:

Վերայիշեալ խնդիրներուն մէջ, զինուո-
րագրական հարցն եւս այժմէականն ստի-
պողութիւն մ'առած է: Իրաւ է որ իրենց
կոչումին եւ պարտականութեան կատա-
րեալ գիտակցութիւնն ունեցող սպաներու
հրամանին տակ զանուող հայ զինուորնե-
րու վիճակն ըստ ամենայնի լաւ է, բայց
տեղ տեղ անոնք շատ աննպաստ վիճակի
մէջ կը գտնուին՝ մասնաւորապէս իրենց
կրօնական պարտաւորութեանց կատարման
մասին: Տէտէաղաճէն կը գրեն օրաթեր-
թերուն թէ Դըրճալըի մէջ — ուր 118 հայ
զինուորներ կը գտնուին զանազան գաւառ-
ներէ —, չորս հայ զինուորներ մեռեր են՝ տ-
ռանց խոստովանելու եւ հաղորդուելու:
Եւ նոյն իսկ դաճաղ չգտնուելով, Խալաթ
զինուորներու յատուկ դաճաղի մէջ դրուեր
եւ առանց հոգեւոր արարողութեան թաղ-
ուեր են: Այդ չըջանալի զինուորները կը
խնդրեն, ուրեմն, որ կա՛մ իրենց հոգեւոր
հովիւ մը ղրկուի, եւ կա՛մ փոխադրուին
այնպիսի տեղ մը ուր գտնէ քրիստոնեայ
եկեղեցի մը գտնուի: Պատրիարքարանը
վատահ ենք թէ կը փութացնէ իր ղիմում-
ները՝ պատկանեալ պաշտօնատան մօտ, բա-
նակին մէջ գտնուող հայ զինուորներու
հոգեւոր պարտականութեանց անթերի կա-
տարման միջոցներ տնօրինելու համար:
Նոյնքան անհրաժեշտ եւ ստիպողական է
զիմումը՝ առ որ անկէ՛ք դպիրներու գին-
ուորական ծառայութենէ զերծ գտնուե-
լուն մասին, որ վերջնական ելք պէտք է
տանայ անյապաք: Ասիէ գտաւ, Ազգ.
Կեդրոնական վարժարանի՝ իբրեւ Խսաթի
Ալի կուռավարութենէն պաշտօնապէս ճանչ-
ցուելուն համար ձեռնարկները ցարդ ելք
մը չունենալով, աշակերտներէ ոմանք կը
կանչուին դրօշի տակ, մինչ ուրիշ օտար

նմանօրինակ կրթական բարձրագույն հաս-
տատութիւնք՝ պետութենէն պաշտօնապէս
ճանչցուած ըլլալով, անոնց աշակերտները
զերծ կը մնան զինուորական ծառայութենէ :
Մէկ երկու տարիէ ի վեր զինուորագրու-
թեան գործողութիւնները չարունակելով
հանդերձ, ինչպէս անոր յարակից դանապան
հարցերու, նոյնպէս կեդրոնականի պաշտօ-
նապէս ճանչցուելուն մասին ազդային իշ-
խանութեան թող վարմունքը մեծ վնաս-
ներու դուռ բացաւ, որոնց նորագոյնն է
կեդրոնականի աշակերտաց ենթակուած
կադրութիւնը : Այդ վիճակն արդար յուզում
մը առաջ բերելով նոյն ուսանողներուն
մէջ, ասոնք — ինչպէս կը կարդանք օրա-
թերթերու մէջ —, դատադուլ հռչակած են
երեքշաբթի օրը, որոշելով ի հարկին եր-
թալ այն վարժարանները, որոնք պաշտօ-
նապէս խառնիէ ճանչցուած են եւ կը վա-
յելին անոր բոլոր իրաւասութիւնները :
Կեդրոնականի անօրէն Մ. Նալպանեան
էֆ. նոյն օրը տեսակցեցաւ Տեղապահ Ս.
Հօր հետ, որ խոստացաւ վաղընդօրոյթ ան-
հրաժեշտ դիմումն ընել, այդ աշակերտնե-
րու զինուորագրութեան յետաձգման հա-
մար : Յուսանք որ Կեդրոնականի աշակեր-
տաց այս կարուկ ընթացքը առիթ պիտի
ըլլայ Ազգ. Պարտիաքարանձին՝ շարժելու
եւ քիչ մը վաւերով՝ առկալս եւ անյետա-
ձգելի ինդրոյ անյապալ կարգադրման
համար : (*)

ՀԱՄԱԳՈՒՄՈՐ ԺՈՂՈՎԸ ԵՂ. օր նիստ
գումարեց Ազգ. Պարտիաքարանձին մէջ.
Ներկայից թիւն էր 30 : Հրաւերին շարժա-
ռիթն էր հասարակաց վայրերու մէջ, (ինչ-
պէս Սրբանոխա, քլիւսներ, պանդոկներ)
պակադրութիւն կատարելու խնդիրը :
Տեղապահ Ս. ք պնդեց թէ ըստ եկեղց. հաւ-
ւանք սովորութեանց, պատկները միայն

Եկեղեցւոյ մէջ պէտք է կատարուին : Թեր
ու դէմ վիճարանութիւններէ ետքը, քուէի
դրուեցան երեք առաջարկներ. — 1. Պատկը
միայն Եկեղեցւոյ մէջ կատարել : 2. Թէ՛ Եկե-
ղեցիներու եւ թէ՛ տուներու մէջ կատարել :
3. Եկեղեցիէն եւ տունէն զոտ ուրիշ յար-
մար վայրեր ալ կատարել : Ա. քանաձեւին
ոչ ոք քուէ տուաւ : Բ. ք ստացաւ 27 քուէ,
եւ Գ. ք 23 քուէ : Երէցեան Ս. առաջար-
կեց որ յարմար տեղեր կատարուած պա-
հուն հոգեւոր խիստնութիւնէն արտօնու-
թիւն ուղարկ : Այս առաջարկը միայն 19
քուէ ստացաւ : Հետեւապէս ըստ Բ. քա-
նաձեւին որոշուեցաւ բաց ի Եկեղեցիներէն
պատկները թողարկել նաեւ տուներու մէջ :

ՊՐՈԽՍՈՅԻ ԳԱՐԱՆ. Ժողովը շնչեալ
կիրակի օր մերժեց է Առաջնորդ Տ. Յովհ.
Ս. Արքեպ. Արշարունիի հրաժարականը,
որ արդիւնք էր ժողովականներու՝ իրենց
պաշտօնը չստանձնելուն եւ առաջնորդարանի
անդոճացուցիչ վիճակի մը ենթարկուելուն :
Եւ տակաջն Արշարունի Ս. կրկնած է իր
հրաժարականը, եւ հրաժարագիր ուղղած
է նաեւ Ազգ. Պարտիաքարանձին : Բայց
Կեդր. Խառն Ժողովն եւս մերժեց այդ
հրաժարականը :

ԵՂԻԱՆԵՄԻՔՈՒԻ կտակած դուժարէն
38000 բուբլի եւս գանձած են Մոսկուայէն
Տեղաք Ժառհարեան կղաւրք :

ՄԵՄ ՊԱՀԲԻ կիրակի առաւօտները Մայր
Եկեղեցւոյ մէջ կը քարոզէ Տեղապահ Ս. ք
եւ երեկոները՝ Տ. Տ. Վահան Յակոբեան,
Գնէլ Գալէմբարեան, Գրիգորիա Պալաք-
եան եւ Սմբատ Գաղաղեան Մ. Վ. ները :
Կանանց համար պիտի խօսին՝ Տ. Տ. Խոս-
րով, Վահրամ, Հմայեակ եւ Սուբէն Մ.
վարդապետները :

ԿՐՕՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ. — Անցեալ շաբ-
թուան միջոցին հինգ Հրեաներ՝ երկուքը
այր եւ երեքը կին, եւ երեք Յոյներ՝ մէկը
այր եւ երկուքը կին՝ Ազգ. Պարտիաքա-
րան գլխած են, ընդունուելու համար Հայ
Եկեղեցւոյ ծոցը : Ի դէպ է յիշել թէ՛ ըստ
որոշման Կրօն. Ժողովոյ, այս կարգի դի-
մումներ այն տունն միայն պիտի ընդուն-
ուին, երբ ամուսնական նկատուիներով չէ
որ կ'ըլլան :

(*) Վերջին պահուն ուրախութեամբ կար-
գացնէր թերթերու մէջ թէ Պատերազմական
Նախարարը հաւանած է Կեդրոնականի աշակեր-
տաց զինուորագրական գործողութիւնը երկու
երեք շաբաթ յետաձգել մինչեւ ինդրոյ կար-
գադրութիւնը՝ Կրթական Նախարարութեան
հետ :

ԿԻԼԻԿԻՈՅ Ս. Կաթողիկոսը Պատրիարքարան կը գրէ թէ Եպիսկոպոսական ձեռնադրութիւնը յետաձգած է Լուսաւորչի տօնին, եւ կը խնդրէ որ Տ. Յակոբ Աշոտ Եպ. ի հետ զրկուի նաեւ Տ. Գէորգ Արքեպ. կամ ուրիշ բարձրաստիճան եկեղեցական մը՝ նոյն ձեռնադրութեան համար: Սառն ժողովն հաւանութիւն յայտնեց:

ՊԻԼԵՃԻԿԻ մէջ հաշտութիւն գոյացնելու համար, Նիկոմիդիոյ Առաջնորդ Տ. Ստեփաննոս Եպիսկ. Յովակիմեան ամէն ջանք ի գործ դրելով, բայց ձեռնադրոյն եւ չեր է: Ուստի հրահանգ կը խնդրէ Պատրիարքարանէ՝ դառնալու Նիկոմիդիա: Անկարելի եղած է հաշտութիւն գոյացնել, նոյն իսկ Եկեղեցին բանալու ալ կարելիութիւն չի տեսներ: Սառն ժողովն որոշեց աշխարհական պատուիրակ մ'իւս զրկել, աջակցելու համար Ն. Սրբաշնութեան: Ի հարկին կառավարական աջակցութեան եւս պիտի դիմուի, Եկեղեցին բանալու համար:

ԿԵՍԱՐԻՈՅ Առաջնորդ Տ. Տրդատ Եպիսկ. կը գրէ թէ վերջնապէս կը հրաժարի առաջնորդութենէ, եւ գործօն կեանքէ քաշուելով, պիտի երթայ Մազնիսո՝ եղբորը քով տալիս:

ԲԲԾՎԻՏԷՆՍԻ (Ամերիկա) մէջ հաստատուած «Տուգասար (Սեբաստիա) գիւղի Ուսումնասիրաց Ընկերութիւնը» 100 Անգլ. ոսկի ձրկած է Հ. Բ. Ը. Միութեան, նոյն գիւղին մէջ վարժարան մը կառուցանելու համար, եւ խոստացած է 20 ոսկի եւս զրկել նոյն նպատակով:

ՍԿԻԻՏՍՐԻ Յառաջադիմական լսարանին մէջ Դշ. իրիկուն բանախօսեց Տ. Կոմիտաս Վ., նիւթ ունենալով հայ գեղջուկ երաժշտութիւնը:

ԳՕՆԵՍ-ԱԳՍԷՐԱՅԷՆ հասած նամակներ սրտայոյզ տեղեկութիւններ կը բերեն նոյն քաղաքին մէջ անցեալները պատահած ողորմներուն վրայ: Քաղաքին մէջ տեղէն հոսող գետը որ ստանձ էր 15 օրէ ի վեր, յորդելով բնաջինջ ըրեր է 250 տունէ բաղ-

կացեալ Հայոց բնակարաններուն կէտը, յետին ծայր թշուառութեան մատնելով ժողովուրդը: Ընդհանուր փեայը 28000 ոսկի կ'ենթադրուի: Հայոց Եկեղեցին ու վարժարանը, նաեւ Բողոքականաց ժողովարանը ողորուեր եւ անբնակելի դարձեր են: Կառավարական 300 ոսկի նպատէն մարդ զլուխ 60 փարա ինկեր է: Մնացեալն ինքնին կը գուշակուի:

ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ.—Կրօնական ժողովը, Դատաստ. Խորհրդոյ կոտարած քննութեան վրայ լուծեց ամուսնութիւնը Սամաթիացի Արամնակ Խորէնեանի, հաստատելով անոր յանցապարտութիւնը եւ արգիլելով զինքն ամուսնութենէ եւ զրկելով Եկեղեցւոյ հաղորդակցութենէ, իսկ կինը՝ Աննիկ Կարապետեան՝ արտօնուած է վերստին ամուսնանալու:

ՆՇԱՆՏՈՒԲԻ տտեն Հիւանդանոցի մուսաղինը անյապաղ գանձել որոշեց Տնտես. Խորհուրդը, ձրինքէն եւս 10 զրջ. գանձելով:

ՀԱՅ ՀՈՌՄԷԱԿԱՆՈՒԹԵՆԷ դարձած Շիրինեան Վ. ի ընթացքին նկատմամբ դայթակղալից տեղեկութիւններ ստուած ըլլալով, Կրօն. ժողովն իր յառաջիկայ նիստին կոչած է զինքը, լսելու եւ քննութիւն կատարելով հարկ եղածը գործադրելու համար:

ՆՈՐ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԱՂԷՇԻ ՄԷՋ.— Ազգամարի Կաթող. փոխանորդ Տ. Եղնիկ Վ. կը ծանուցանէր ասիէ առաջ թէ մէկ քանի հայ երեւելիներ Շասախի մէջ սպաննուած են Քուրդերու կողմէ, եւ անոնց մարմիններուն վրայ գտնուած են թուղթեր թէ «Ահա՛ ասանկ պիտի սպաննուին Հայ երեւելիները»: Այս անգամ նոր հեռագիր մը՝ դարձեալ Տ. Եղնիկ Վ. էն՝ կը գուժէ նոր սպանութիւններ: Ազգ. Պատրիարքարանի ուղղուած այդ հեռագիրը կ'լսէ թէ քանի մը օր առաջ եօթը Հայ երեւելիներ՝ Ազգամարի վիճակէն՝ Քուրդերու կողմէ բռնուեր եւ անոնցմէ չորսը սպաննուեր եւ երեքը ծանրապէս վիրաւորուեր են:

ԿՈՐԻՆ Վ. ԵՍԱՅԵԱՆԻ ՇԻՐԻՄԸ

Ողբացեալ Կորին Վ. Վոխճանման ժամանակ Տ. Գարեգին Վ. Խաչատուրեան Մարաշ կը գտնուէր և անոր գերեզմանը կառուցանելու ձեռնարկ մ'ըրած էր: Մարաշէն կը գրեն թէ վերջերս աւարտեր է նոյն դամբարանը, որ անօրինակ է Մարաշի մէջ: Տեղական կարմիր և Պերուքի ձերմակ մարմարինէ չինուած է: 25 ոսկիէ աւելի ծախք գացած է: Դամբարանին վերայ դրուած է. —

ԴԱՄԱՐԱՆՆԵՐ

Տ. Կորին վարդապետ Եսայեան
Դպրեվանոց միաբան
Եւ ժիր մշակ եկեղեցւոյ Հայկական
Ծնեալ ի Մայիսի 1876
Զեռնադրեալ յԱրմաշ
ի 20 Մայիսի 1901
ի ձեռն Տ. Եղիշէ Եպիսկոպոս Դուրեան
Վարեալ զպաշտօն քարոզչութեան
Կ. Պոլիս ի 1903ի
Զառնադրեալ անդադարձութեան ի Բալու
Եւ յԱզն ի 1904-1906
Եւ զԱռաջնորդութեան ի Մարաշ
1907-1908 Հանգուցեալ ի Մարաշ
Յ30 Յունվարի 1908:
Նոյնպէս դամբարանին ձակասը գրուած է:

Սեւ եւ կարմիր տարեներու մէջ տարած հուգիս եւ վերջոյ սիրտս հայրենեաց նուիրեցի, ազատութեան սրեգին դէմ փակեցի ուշքս անձուկով երկնքին:

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ կը ծանուցանենք թէ հետեւեալ բարեւէր ազգայինք մէյմէկ տարեկան ՏԱՃԱՐ նուիրած են,—

Պատր. փոխանորդ Գեր. Տ. Ղեւոնդ Ե. Վ. Դուրեան՝ Սիւլէյմանիէի Հաճի Հապիպի գիւղի Ազգ. վարժարանի տնօրէն Վարդան Էֆ. Վարդերեանեանի:

Վսեմ. Տ. Զ. Թիւեաքեան խան (Ֆրանսոս) գաւառ. ազգ. վարժարանի մը, յատկացուցինք Տեղեկի Աշուշ գիւղի Ազգ. վարժարանին:

Ազն. Տ. Զ. Երզնկեան Էֆ. Շիշլիի աղջկանց որբանոց-արհեստանոցին:

Ազն. Դեղամ Էֆ. Տ. Կարապետեան՝ Մշոյ Ս. Կարապետ վանոց որբանոցին:

Ազն. Սիւնն Էֆ. Կալանճեան՝ Ազգ. Կրթական հաստատութեան մը: Կը յատկացնենք Վսեմայ երամեան վարժարանին:

Այս առթիւ ստիպուած ենք ծանուցանելու թէ գաւառային զանազան աղիւսիկ քաղաքացիներէ խնդրանքներ կը հասնին մեզի, Ազգ. հաստատութեանց-ՏԱՃԱՐ դիմելու ձրիաբար: Թերթին ճիւղակաւոր դժբախտաբար ձեռնու չէ մեզի՝ գոհացում տալու այդ խնդրանքներուն: Հետեւապէս կը հրաւիրենք բարեսէր ազգայիններ, ազնուաբար հայրաքիչ անոնց մեքի առողջ սնունդ մը հանդիսանալու կոչուած այս քերթը:

Կը յիշեցնենք հեռաւոր թէ մերձաւոր Պատ. Բաժանորդներուն թէ բոլոր քաղաքակիրթ երկիրներու մէջ բաժանորդագիրներ կանխիկ են: Այն թողաւոր, համբերատար ողին զոր ցուցուցինք անցեալ տարի, կարելի չէ շարունակել այս տարի եւս, առանց վնասելու զորին կանոնաւորութեան: Հետեւապէս կը հրաւիրենք մեր համակիր բաժանորդները փութացնել իրենց հաշուոց կարգադրութիւնը մեզի հետ:

Նոյնը կը կրկնենք, աւելի իրաւամբ, տակաւին անցեալ տարին տակաւին հաշիւ ունեցող Պատ. գործակալներուն և բաժանորդներուն:

ԿԱՐԵՒՈՐ ՍԽԱԼՈՒՄ մը եղած է Տանաւի անցեալ թիւին մէջ, ուր 92 էջին Բ. սիւնակին 19-20 տողերը պէտք է կարգաւ.— «... և իր նամակն առ Փլալի-անոս, որ կոչուած է Լեւոնի Տոմար (451)»:

ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՀԱՐԱՅԵԱՆ ԴՋԵՆՆԵ ԷՐԱՐԱՅԵԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԱԳԻՐ

ՀԱՐԱՄԱՅԵԱՆ ԴՋԵՆՆԵ ԿԵԶԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ «ՇԱՆԹ»

Ղալաթիա, ձամի Գաբուսու, թիւ 9

“ՏԱՃԱՐ,”

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրուշ
Արսասանմանի համար	10 ծրանք
Ռուսիա	4 ռուբլի
Ամերիկա	2 օղար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարսա

Տաղը բաժանորդը զանազոր իրաւունք
ունի մէկ թերթ ձրի ստանալու :

Իսկ հինգ բաժանորդ զանազոր պիտի
կրնայ մէկ թերթ ստանալ կէս բաժնեկիւով :

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՆԵՐԸ ԿԱՆԹԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ ԴԻԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է գիտնել առ
Ջարմայր Քահանայ Կեղիւհան, Կ. Պոլիս, Պեռիքաւ, Հայոց Եկեղեցի

در سعادتده بشکطاشده ارمفی کلیساشنده (داجار) غزته سی مدیری باباس زارماير

Rev. Père Zarmaïr Guézurian. Rédacteur de la Revue « DADJAR »
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ.— Կազմեց Սե-
րովբէ Վ. Սամուէլեան.— Իր մէջ կ'ամ-
փոփէ աշխարհի նշանաւոր անձնաւորու-
թեանց, Ֆրանքլինի, Ռոջիւտի, Կարֆիլտի
եւ այլոց կեանքի ծրագիրները եւ ուրիշ
կարեւոր նիւթեր: Հայ պատմիչներուն եւ
երիտասարդներուն, նաեւ զօրծի աէր մար-
դոց համար անհրաժեշտ եւ պիտանի հրա-
տարակութիւն մը: Գին 2 զրշ: Կեդրո-
նառեղի Զարդարեան գրատուն, Չազմազ-
ճըլար:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ.— Բազուի Արմ.
Տ. Ներսէս քն. Տ. Կարապետեանի անց-

եալ տարի Մեծ Պահոց Ե. Կիրակին Ս.
Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ մէջ խօսած
հոգեչաօ եւ հմտալից քարաղը: Տպ. Ս. Թ.
Շահբաղեանի, Բազու, Գին 15 կոպէկ:

ՍՐՏԻ ԺԱՄԵՐ.— Ողբացեալ բանաս-
տեղծ Կարապետ Ոսկեանի զանազան
թերթերու մէջ ցիրուցան կորուսած քեր-
թուածները, նաեւ անոնց քերթուածները,
բոլորն ալ յուզիչ իրենց պարզութեանը
մէջ, գեղեցիկ հասարի մէջ ամփոփուած են
իր հարազատին՝ Ազն. Գրիգոր էֆ. Ոսկեա-
նի կաշմէ: Գիրքին առաջին էջերը կը զար-
դարէ Սիպիլի գեղեցիկ մէկ յառաջաբանը:
Տպ. Օ. Սրբուման, Գին 8 զրշ:

